# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 60

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՈՒՐԱԴ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 16.03.2020 թվականի թիվ 298-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ դրություն հայտարարելու մասին՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի Մուրադ Սարգսյանի անվան արվեստ դպրոցի սաներին ծնողական վճարներից տրամադրել արտոնություններ՝ մինչև սահմանված ժամկետի ավարտը.

   ա) Պարարվեստի և գեղանկարչության բաժինների համար մեկ երեխայի մեկ ամսվա համար ծնողական վճար գանձել 1000 ՀՀ դրամ՝ նախկին 3000 դրամի փոխարեն,

   բ) Բոլոր մյուս բաժինների համար մեկ երեխայի մեկ ամսվա համար ծնողական վճար գանձել 2000 ՀՀ դրամ՝ նախկին 3000 դրամի փոխարեն,

2. Արվեստի դպրոցի աշխատակիցների աշխատավարձերը հաշվարկել սահմանված դրույքաչափերի 100%-ի չափով,

3. Հանձնարարել արվեստի դպրոցի տնօրեն Նելսիկ Մելքոնյանին՝ թերի կամ բաց թողնված պարապունքները լրացնել առաջին իսկ հնարավորության դեպքում՝ արվեստի դպրոցի պարապելու ժամանակահատվածում,

4. Սույն որոշման 1-ին կետով սահմանված արտոնությունները կիրառել սկսած մարտի 16-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ _____